

3898

1592

891.71  

---

3 - 24

2011

5:20 03

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 110

891.71

3m-24

Ի Ի Ր. Ե Ա Կ Ծ Ի Զ

# ԾԵՐՈՒՆԻ ՄԱՐԿՈՆ



Թարգմ. ռուսերէնից

Յ Ո Վ Հ. Մ Ե Դ Ն Ի Կ Ե Ա Ն



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան Մ. Դ. Ռոտինևանցի

Типография М. Д. Ротинианца. Гол. пр. д. № 41.

1896

Ժողովրդական գրադարան.

2606

# ԾԵՐՈՒՆԻ ՄԱՐԿՕՆ

Ա.

Թէյզա զեռի աջ ափին, Կիկինդայի և Մե-  
լենցայի միջև, մինչև հիմա էլ զեռ գոյու-  
թիւն ունին երկու գուտ սերբիական համայնք-  
ներ՝ Վ. և Կ., որոնցից առաջինը մասնաւոր  
մարդու է պատկանում, իսկ երկրորդը Կիկին-  
դայի Մագիստրատին \*):

Այդ գիւղերի արտաքին տեսքը բոլորովին  
միատեսակ էր — մաքուր, սպիտակացրած փոք-  
րիկ միլարկանի տներ, իսկ մի քանի քիչ ու-  
շատ ունեւոր գիւղացիներինը զանազան գոյ-  
ներով ներկուած: Տեղ-տեղ պատերի վրայ աչ-  
քի էին ընկնում տանուտիրոջ անունն ու ազգ-  
անունը, երբեմն և տան շինութեան տարին՝  
խոշոր ու կարմիր տառերով գրուած: Այս-  
պէս, Կ-ում, գլխաւոր փողոցի ծայրին ընթեր-

\*) Վարչութեանը:

Доволено цевзурою. Тифлисъ, 31 Марта 1896 г.

ցողը հաւանօրէն կտեսնէր մի փոքրիկ, մաքուր տնակ, որի վրայ մինչև այժմս էլ դեռ կարդացուում է այս հնացած արձանագրութիւնը. «Այս տունը աւերեցին ուզրերը 1848 թուականին և նորից շինուեց 1852-ին»: Դրանից փոքր ինչ բարձր, ուղիղ կտուրի տակ, կըպցրած էին մօտաւորապէս բռունցքի մեծութեան տառերով հետևեալ բառերը. «Մարկօ Լակօվիչ»: Մի ինչ-որ գոռոզ ու մռայլ հայեացք ունէին բարձրից այդ ահագին չարագուշակ կարմիր տառերը, որոնք աչքի էին ընկնում դեռ հեռու, այդու շրջակայքից...

Ինչք էր այդ այդպէս... հազիւ թէ մէկը ձեզ պատասխանէր... այն էլ բաւական է, որ բոլորը առանց բացառութեան յարգում էին, իսկ մի քանիսը մինչև անգամ վախենում այդ Մարկօից, չնայելով որ նա իւր ամբողջ կեանքում մարդու ոչ միայն վնաս չէր տուել, այլ և չէր ցանկացել ոչ մէկի վատը: Նոյն իսկ գիւղի քահանան, հաստափոր ու բարեսիրտ Տէր-Յովհաննէսը, նրա տան մօտով անցնելիս սովորաբար վերցնում էր իւր մաշուած գրգգորած գլխարկը, իսկ երբեմն էլ կանգ առնելով երկար ու ընկերական յարգանքով սեղմում, թափ էր տալիս Մարկօի ձեռքը և հե-

տը խօսակցութիւն բաց անում մի որևէ բանի մասին:

— Ա, բարի աջողում, Մարկօ ամի, քնչպէս էք... քնչպէս էք դուք կարծում, ինչ թուում է, որ այս տարի լաւ հունձ կունենանք. հացի գինն էլ այժմ լաւ է... յուսով եմ, որ հարսանիք էլ բաւական կլինի... Աստուած ողորմած է...

— Կլինի, Տէրտէր, կլինի, յօնքերը կիտած պատասխանում էր Մարկօն իւր խորխոր ձայնով, և փոքր ինչ լռելուց յետոյ աւելացնում. «Աստուած տար, ամեն բանն էլ լաւ կ'լինէր... միայն մի բան երևի մեզանում երէք չի լինի»:

— Գիտեմ, գիտեմ ինչի մասին էք դուք մտածում, ասում էր Տէր-հայրը մի քիչ շփոթուած, և դէմքից էլ նկատելի էր լինում, որ նա շատ էր ցանկանում փոխել խօսակցութիւնը:

— Ես շատ լաւ գիտեմ, թէ ինչ կայ ձեր սրտում. դէհ, սակայն քնչ պէտք է անել, մենք բոլորս էլ փափազում ենք դորան... բայց... գիտէք ինչպիսի ժամանակներ են... այնպէս որ...

Տէրտէրի այդ պատասխանի վրա Մարկօ ամին սովորաբար հեգնօրէն ծիծաղում էր և

նւսերը շարժելով ասում. «կատարեալ առողջութիւն եմ ցանկանում ձեզ, Տէր-Հայր», ու շուտով հեռանում իւր խրճիթը: Իսկ փոքր ինչ շփոթուած Տէրտէրը ուղեկցում էր նորան երկիւղած հայեացքով, մըմըթալով ինքնիրան. «Օ՛, այդ Մարկոն երբէք մի լաւ բան չի մտածի, բոլորից նա դժգոհ է, բոլորն էլ նրա սրտովը չեն, տէրտէրն էլ, տանուտէրն էլ, մինչև անգամ հէնց պարոն վարժապետն էլ... Մի անգամ սափրիչ Գրիշան հարբած-հարբած մի տեղ բաժակ առաջարկեց ամբողջ սերբիական ազգի համար... Մեր Մարկոն սիրտը իսկոյն լցուեց ուրախութեամբ: Նա վեր թռաւ տեղից, ոտքի կանգնեց... և հէնց այժմ էլ... նա նոյնը ասաց ինձ. «ամեն բան կլինի, միայն մի բան երբէք չի լինի»... Գիտեմ թէ նա ինչի մասին է մտածում... մարդը ցանկանում է, սիրում է ազատութիւնը... հա՛-հա՛-հա՛. էհ, Տէրը նրա հետ, ... թող իւր քէֆի ուզածն անի... էդ խելքով նա հեռու չի գնայ...»

Եւ լիրաւի, ծեր Մարկոն թէ արտաքինի, թէ բնաւորութեան մէջ աչքի էր ընկնում մի ինչ-որ տարօրինակ, այսպէս ասած արմատացած սառնութիւն: Նա կանոնաւոր, բայց կոպիտ դէմք ունէր—ճակատը լայն, չեչոտ. հասակը ահագին, բայց ընդհանրապէս շատ նի-

հար, անճոռնի, սակայն ամրակազմ և ուժեղ, այնպէս որ նրա ամբողջ կազմուածքը ճկուն պողպատի էր նմանում... Երբ նա խօսում էր (որ շատ սակաւ էր պատահում), խօսում էր պարզ, քիչ, կարճ և որոշ, բայց ոչ այնպէս, ինչպէս սովորաբար անում են մեր գիւղացիները. սրանք հանգիստ չեն թողնում մինչև իսկ մեր նախածնող Ադամ և Եւային, միայն թէ մի բան պատմած լինին իրանց տատերի ու մօրաքոյրերի մասին: Բայց նա վերին աստիճանի լաւ սրտի տէր մարդ էր: Եթէ գիւղը աղքատ մտնէր՝ Մարկո Լակօվիչը երբէք սովորութիւն չուներ նրան դուրս անելու, այլ անպատճառ մի բան տալիս էր, առանց խտրութիւն դնելու նրա ազգութեան ու կրօնի մէջ. մինչև անգամ մաջարին էլ նա չէր դուրս անում, մինչդեռ բոլորին էլ յայտնի էր, որ հէնց մաջարներն էին աւերել նրա հայրենի բնակարանը: Կպատահէր, որ ձմերային ցուրտ երեկոները նրա տան մօտով կանցնէր մի աղքատ մաջար. Մարկոն տեսնելով նրան՝ իսկոյն հրաւիրում էր իւր մօտ գիշերելու իւր սենեակը...

— Կսառչի ցրտում շուն մաջարը, ասում էր նա:

Աղքատին նա ուտեցնում, խմեցնում, փա-

վուճակ անկողին էր տալիս և ո՛չ մի խօսք այդ ժամանակ չէր խօսում հետը: Առաւօտեան տալիս էր նորան մի կտոր հաց և մի քանի կում օղի... Մաջարը հէնց որ բերանը բաց կանէր շնորհակալութիւն յայտնելու՝ Մարկօն մինչև անգամ առանց նայելու և լսելու նրբան մինչև վերջը՝ խսկոյն խօսքը կտրում էր— «բարի ճանապարհ» կամ «ցկրկին խաղաղ տեսութիւն»: Բայց ով լաւ ճանաչում էր Մարկօ Լակօվիչին՝ նա հազիւ թէ հաւատար նրա խօսքերի անկեղծութեան, որովհետև Մարկօն երբէք չէր կարող մաջարին, իւր հայրենի երկրի կեղեքողին «բարի ճանապարհ» կամ «խաղաղ տեսութիւն» ցանկալ:

Ոչ ոք չէր կարողանում հասկանալ Մարկօի այդ տեսակ վարմունքը, դրա պատճառով և սկսեցին նրա մասին գանազան անհետեթ լուրեր պատել: Գիւղում մինչև անգամ ասում էին, որ Մարկօ Լակօվիչի տանը անպատճառ մի գաղտնի բտն է կատարւում. իսկ պառաւ կանայք, Լակօվիչի հարևանները երգւում էին, որ նրա տանից գիշերները յաճախակի այնպիսի մի տղմուկի ու դրմփոցների ձայներ են գալիս, որ կարծես այնտեղ ձիերի ամբողջ երամակներ լինին վազվզում:...

Մի անգամ կէս գիշերին նրանք ճրագներ

տեսան սենեակներում ու վերնայարկում... սկզբում կարծում էին, թէ հրդեհ է. բայց որչափ գարմացան նրանք, երբ ճրագը վայրկենաբար հանգաւ և Մարկօ ամին գողտուկ ցած իջաւ սանդուխքներից մի ինչ-որ բան բերելով ձեռքին: Այդ կանանցից ո՛չ մէկը ի հարկէ չէր կարող ասել, թէ ինչ էր իսկապէս նրա ձեռքինը, իսկ թագնուել, նայել, ականջ դնել ոչ միայն կանայք, այլ նոյն իսկ տղամարդիկ չէին համարձակում:...

Լակօվիչը ճշմարիտ որ ցած իջաւ վերնայարկից, վէր դրեց բերած իրը վառարանի ետև, ձգեց նրա վրա վերարկուն և նստեց սեղանի մօտ ընթրիք անելու: Սեղանի վրայ դրած ճրագը աղօտ լոյս էր արձակում և լուսաւորում թէ Լակօվիչին և թէ նրա որդի Տանօին:...

Տանօն բարձրահասակ տղայ էր, ծերունի Մարկօի կատարեալ պատկերը ո՛չ միայն արտաքինով, այլ մինչև անգամ հոգեկան ու Ֆիզիքական յատկութիւններով, միայն երիտասարդութիւնն ու թարմութիւնն էր տարբերում հօրից: Վեհ գեղարուեստագէտը, որին մենք ժամանակ ենք անուանում՝ գեռ չէր կարողացել նրա մատաղ գէմքի վրայ դրոշմել այն պողպատի գծերը, որոնց մէջ հաստա-

տակամութիւն, անգրգուելի ոյժ և կանոնա-  
ւոր մտածողութիւն է կարգացւում...

— Տանօ, ասաց ծերունին հաստ ձայնով.  
ես գտայ այն. նա ընկած էր վերնայար-  
կում, հէնց ուղիղ կտուրի տակ, զանազան  
անպէտք իրերի ու աղբի մէջ...

Տանօի աչքերը փայլեցին— հօր բերածը  
երևի նրան շատ ուրախացրեց, բայց և այն-  
պէս նա լռեց...

— Վաղը մի լաւ կխօսինք, Տանօ, ասաց  
Մարկօն. իսկ այժմ գնա ու հանգստացիր...  
դու հօ այսօր շատ-շատ ես աշխատել... մէկ  
էլ որ վաղը պէտք է պատրաստութիւն տես-  
նել, հեռու ճանապարհ ես գնալու . . . . .  
. . . . .

Ահա այն բոլորը, ինչ որ պառաւ կա-  
նայք կարողացել էին դուրս քաշել այդ գե-  
շեր Լակօվիչի տանից: Նրանք խորհրդաւոր  
կերպով պատմում էին միմեանց տեսածները,  
չմոռանալով ի հարկէ իրանց կողմից էլ զա-  
նազան ենթադրութիւններ ու կարծիքներ ա-  
ւելացնել: Բոլոր տեսածը մութ, խորհրդա-  
ւոր և վերին աստիճանի կասկածելի տեսքով  
էր սրտկերանում նրանց երևակայութեան  
մէջ... Նրանցից իւրաքանչիւրը խորհրդաւոր  
կերպով շարժում էր գլուխը ասելով— սխ,

լաւ բաներ չէ անում այդ ծերացած սատա-  
նան. մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, Աս-  
տուած տայ, որ նրա պատճառով մեր գըլ-  
խին էլ մի փորձանք չգայ...

Բ.

Հեռեկալ օրը, որ հէնց ուղիղ Եղիա  
մարգարէի տօնի նախատօնակն էր 1875  
թուականին՝ ծերունի Լակօվիչը իւր միակ  
որդի Տանօի հետ նստած էր իւր մաքուր սե-  
նեակում սպիտակ սփռոցով ծածկուած սեղա-  
նի առաջ: Նրանք երկուսն էլ լուրջ էին և  
մտազբաղ: Ծերունի Մարկօն սթափուեց մի-  
այն իւր կնոջ բարի Մարայի ներս մտնելով,  
որ դրեց սեղանի վրայ մի կտոր ապուխտ,  
հաց և մի քիչ էլ կարմիր շիշով կօմադեր \*):...

— Ահա ձեզ, ասաց նա. մի փոքր կազ-  
դուրուեցէք. հանաք բան խօ չէ սիրելիքս,  
ամբողջ անցեալ շաբաթը հօ մի տաք կերա-  
կուր չենք դրել բերաններս: Մեր հացաւէտ  
Բանատի համար էլ հօ լաւ օրեր չլուսա-  
ցան... ճշմարիտ, սի տօն օր գիտես այժմ,  
ոչ լի օր, այլ առաւօտից մինչև երեկոյ  
չարչարուէր, այս կողմն ընկիր, այն կողմն

\*) Օղի:

ընկեր, և աշխատածդ էլ քնչ է... Նրա տը-  
խուր ու նիհարած դէմքից երևում էր, որ  
բոլոր ասածները սրտի խորքերիցն էին բըլ-  
խում, և նա ցաւում էր իւր խեղճ մոռա-  
ցումած ժողովրդի համար... Բայց յանկարծ  
նրա ամբողջ դէմքը փայլեց ուրախութեամբ...  
նա ժպտաց ..— Ե՛հ, Տէրն իրանց հետ, ո-  
չինչ... այդ կճուճի մէջ դեռ կայ մի քիչ  
իւզ... այսօր իսկ և իսկ իշխանական ճաշ կը  
պատրաստեմ—կեփեմ թթու արդանակ, պան-  
րից կարկանդակներ կպատրաստեմ, կարծեմ  
Տանօս սիրում է... և ապա դաթայ կթխեմ...  
Իսկ մոռանում, Մարկօ, քեզ համար երեւի  
մի քիչ գինի մնացած կլինի... քանի՜ տա-  
րի է քեզ այդպէս ուրախ չեմ տեսել...

— Մարն, հնդուհաւը մորթիր, մի լաւ  
խորովիր, իսկ թոքերից ու պլոճիկից մեզ  
համար պապրիկաշ \*) պատրաստիր, ասաց  
Մարկօ ամին, աչքերը նորան դարձնելով...

Մարան էլ նոյնպէս նայեց նորան զարմա-  
ցած...— Այդ քնչ է պատահել քեզ. Մարկօ.  
դու չէիր ինձ ասողը, որ ես նրան կերա-  
կրեմ-չաղացնեմ մեր «փառաց» մեծ տօնի օ-  
րուայ համար... եթէ սիրտդ անպատճառ խո-

\*) Սերբիական կերակուր:

րովի է ուզում՝ երկու բառ ունինք էլի, նրանց  
կխորովեմ...

— Հնդուհաւը խորովիր—ասաց Մարկօ ա-  
մին անդրդուելի ու յամառ ձայնով: Մարան  
մի անգամ էլ տարակուսած նայեց մարդու  
երեսին, շուռ եկաւ ու դնաց իւր գործին.  
Իսկ Մարկօն դանդաղ և մեքենաբար տա-  
րաւ ձեռքը դէպի շէշը, մի-երկու կում խմեց  
նրանից բերանին դրած և տուեց Տանօին...

— Առ, Տանօ, մի փոքր կաղղուրուիր...  
Աստուած յաջողի՛ այնտեղ, ուր մտադիր ես  
գնալ՝ հազիւ թէ այսպիսի կօմադեր գըտ-  
նես... Մենք հօ աղքատ ենք, Տանօ. նրանք  
մեզնից էլ աղքատ են և աւելի դժբախտ...  
Ինչ պէտք է անել... Սովը տանն էլ նոյն  
սովն է, տանջանքը—նոյն տանջանքը, միայն  
օտար երկրում նա աւելի ևս անտանելի է  
դառնում...

Տանօն լաւ էր. նախ նրա համար, որ նա  
համեստութիւնից երբէք շատ չէր խօսում,  
մանաւանդ հօր մօտ, որին այնպէս սաստիկ  
սիրում էր ու յարգում: Երկրորդ՝ նրա հա-  
մար, որ առհասարակ զիւզացիները սակա-  
ւախօս են մեծերի առաջ, և քաղաքացիների  
պէս շատախօսութիւնը նրանց մէջ արմատ-  
ներ չէ ձգել... Նա միայն լաւ նայեց դէպի

անկիւնը վառարանի ետևը դրած առարկայի վրայ, որ անցեալ գիշեր ցած էր բերուած վերնայարկից և ծածկուած էր վերարկուով: Այդ առարկան նրա հոգին լցնում էր բաւականութեան մի ինչ-որ անմեկնելի զգացմունքով, որը պարզ ցոլանում էր նրա խոշոր ու սև աչքերի մէջ...

— Այդ լաւ է, Տանօ, շարունակեց ծերուկը, նայելով խանդաղատալից հայեացքով իւր սիրելի որդուն. հէնց իմ սրտովս է քո այժմեան մտածածդ. թէ ճիշտն ուզում ես իմանալ՝ հօ ես էլ մի ժամանակ կուուել եմ աւստրիացիների, իսկ յետոյ հունգարացիների դէմ, երբ նրանք սկսեցին այրել մեր եկեղեցական գրքերը և կախել մեր քահանաներին: Մենք՝ սերբերս անկարող էինք անտարբեր աչքով ահանատես լինել այդպիսի բռնութեան, միաբան ուժով գէնք վերցրինք ու վճռեցինք կուուել մեր իրաւունքների համար մինչև արիւններիս վերջին կաթիլը: Զուր Զոնչիչը և Վանջելիչը աւագերէցի հետ աշխատում էին խորամանկութեամբ խաղաղութիւն վերականգնել... Մենք կրակ տուինք խաբեբաների տները, իսկ նրանցից մի քանիսը նոյն իսկ իրանց գլխով տուժեցին իրանց դործած յանցանքը... ահա, այդպէս, Տանօ, այդպէս,

սիրելի որդիս... ասաց մեղմութեամբ Մարկօ ամին և տխուր հառաչանքը դուրս թուաւ նրա ցաւատանջ կրծքից:

— Հայրիկ... իսկ այժմ մի՞թէ աւելի լաւ է... մի՞թէ այժմ էլ աւստրիացիները չեն խլում մեր բերանի վերջին թիքէն, կամ ժանդարմներն ու տանուտէրները չեն կոզուտում ժողովրդին. իսկ Բօսնիայում, Հերցեգովինայում... Սատուած իմ, ինչէր չեն կատարում դեռ այնտեղ... աւելի խիստ... աւելի սոսկալի... Երբ որ Միքայէլը կարդում է լրագիրներում՝ իմ սրտիցս արիւն է սկսում կաթել: Մի մասը մեռնում են սովից Սավայի ափերում, միւսներին մորթում են ընտանի յարկի տակ կատաղի ասիացիները... հարագատ մանուկին պատառոտում են մօր աչքի առաջ... Ո՛հ, Սատուած իմ: Հայրիկ, ես երդուել եմ գնալ Հերցեգովինա, թէկուզ ինձ վիճակուի գլուխս էլ վէր դնել այնտեղ. ես չեմ ցանկանում, որ գոռոզ մաջարը ասէ. «այդ ըացերը այն աստիճան ընկել են, որ մինչև անգամ մոռացել են իրանց մայրենի յարկը»... Ո՛չ, քանի դեռ երակներումս սերբիացու արիւն է հոսում՝ երբէք չի լինի այդ բանը: Եւ ես գոնէ մի գիշեր կեանքիս մէջ կկանգնեմ «մեռեալ պահապան» Հերցեգովի-

նայի լեռներում, ինչպէս և դու, հայրիկս,  
կատարեցիր ծառայութիւնդ Բասսի հովտում  
1848-ին:

Վերջին խօսքերի վրայ ծերունու դէմքը  
միանգամից մռայլուեց, բայց նա ոչ մի բառ  
չարտասանեց իբրև պատասխան որդուն:

— Հայրիկ, դու հօ խոստացել ես ինձ մի  
անգամ պատմել, թէ ինչպէս դու «մեռեալ»  
պահապան ես կանգնել... Թէ Ս.սոժու կամ-  
քը կլինի՞ գուցէ ես էլ իմ յանգուզն գլուխս  
վէր կգնեմ Բոսնիայի կամ Հերցեգովինայի լեռ-  
ներում, նոյնպէս «մեռեալ պահապան» կանգ-  
նած ժամանակս, այնպէս որ այլևս երբէք  
չեմ կարողանայ իմանալ քո այդ գաղտնիքը...

Մարկօ ամին լրջօրէն նայեց որդուն և  
մեղմ պատասխանեց.

— Որդեակս, կան այնպիսի բաներ, որոնց  
մարդ չէ իշոււմ բաւականութեամբ, որոնցից  
մարդու մագերը ցից-ցից են կանգնում գլխի  
վրայ, իսկ արիւնը սառչում է երակներում.  
բայց քանի որ դու հրաժեշտի մօտալուտ ժա-  
մին և քո կատարելիք սխրագործութիւնից  
առաջ կամենում ես անպատճառ լսել իմ  
պատմութիւնը, էհ, որ այդպէս է՝ ես կը  
կատարեմ քո արգարացի ցանկութիւնդ և

կաշխատեմ չիշել այն բոլորը, ինչ որ ինձ  
այն ժամանակ վիճակուեց տանել ու չարչա-  
րուել:

Գ.

Մինչև մաջարացւոց յեղափոխութիւնը  
ես երբէք եղած չէի Թէյզայի այն կողմը—  
այսպէս սկսեց Մարկօն իւր պատմութիւնը—  
որովհետև իմ պարապմունքներիցս ոչ մէ-  
կը առիթ չէր ներկայացրել: Ես շատ եմ եղել  
Կիլիկիացու, Ջուկօշիւում և մեր երկրի ու-  
րիշ մասերում, բայց մնացած երկրների մա-  
սին բոլորովին ոչինչ չգիտէի, կամ աւելի  
ճիշտն ասած՝ գիտէի միայն ուրիշների պատ-  
մելով: Իմանում էի, որ բացի մեր շրջանից  
կան դեռ շատ սերբիական հողեր, բայց մար-  
դըս մինչև որ իւր սեփական աչքով չտես-  
նէ, կամ ականջներով չլսէ՝ ոչ մի նոր բանի  
այլապէս չէ հաւատում...

Հէնց այդ արժանայիշատակ տարին ես  
բախտ ունեցայ տեսնելու և իմ հիւսիսային  
եղբայրներիս—Ռօսսերին և մեր քաջ Սրեմ-  
ցիներիս, Շուժազիցիներին, Չերնոգորցիներ-  
ին... Սիրտս լցուեց բերկրութեամբ նրանց  
տեսնելուս պէս... Ես զգացի իմ մեծութիւնս,  
զգացի, որ ես այժմ սլաւոնական մեծ ցեղի

1001  
1024

զաւակն եմ և ոչ թէ միայն սերբեական ազգի... Այսպիսի մի բերկրալից զգացմունք բարձրացնում է մարդուս իւր սեփական աչքերում...

— Արդարացի է միթէ, մտածում էի ես, որ այդպիսի մի մեծ և փառաւոր ազգի զաւակը, ինչպէս են սլաւոնները, մի ինչ-որ երկչոտ մաջարի ստրուկը լինի...

Այդպէս էի ես մտածում, և միայն ես չէի այսպէս մտածողը. մեր ամբողջ զաւառը նոյն կարծիքին էր, և չկար մի մարդ, գոյութիւն չունէր մի ոյժ, որ մեզ ստիպէր վերջ տալու այդ կռուին մեր ոգորմելի ու տգէտ կեղեքիչների և բռնակալների հետ...

Մեր հին մագիստրատում դեռ պահպանւում էին մեր վեհ նախորդների գէնքերը... մենք կոտրեցինք նրա երկաթէ դռները, հաւաքեցինք գէնքերը և կազմեցինք «Կիկին-դայի» կամաւորների հռչակաւոր գումարտակը: Դա զօրքերի մի հրաշալի գումարտակ էր, կազմուած մեր ամբողջ «Ռիշտրիկտի» (զաւառակի) երիտասարդութիւնից, մի զօրք, որի առաջ Նապօլէօն Բոնապարտը ինքը կը խօնարհէր... Բնչ էին մեր մօտ արքայական կանոնաւոր զօրքերը... Դրանք մի-մի չնչին խաղալիկներ էին նշանագրեւաններով զարդա-

րուած, մտրդիկ առանց սրտի, առանց հօգու, որոնց երակներում արիւնը վաղուց սառել էր, մարդիկ, որոնց մի քանի կոպէկներով կարելի է գնել... Հէնց որ անճոռնի շվաբը գոռում էր նրանց վրայ «դէպի ձախ»՝ նրանք փայտի տաշեղների պէս իսկոյն դէպի ձախն էին դառնում, «դէպի աջ»՝ և ահա խայտաճամուկ խաղալիկների շարքը դառնում էր դէպի աջ, չիմանալով թէ ո՛ւմ և ինչի համար է նա այդ բոլորը կատարում...

Այդպէս չէինք մենք, սերբերս... մեր զօրապետը մայօր Լազիչն էր... բայց Բնչ մի քաջարի մարդ... բարձրահասակ, վայելչակազմ, փոքր ինչ բարակ, բայց կրծքի լայնութեամբ և մկանունքի ուժով կատարեալ Հերկուլէս... Նրա արեակէզ դէմքից երևում էր, որ կեանքի կեսը բաց երկնքի տակ էր անցրել և ո՛չ թէ թղթեր մրոտել դիւանատներում և գրիչներ պատրաստել շվաբացի գեներալների համար... Հէնց որ նա ձի չէր նստնում, — քո երեւակայութեանդ մէջ մի վայրկեանում յարութիւն էին առնում մեր փառաւոր Կոսովօ դաշտի հերոսները... յիրաւի, կարծես տեսնում ես առաջիդ Միլօշ Կաբիլիչին... այնպէս նա կհանէր սուրը ու կը նայէր զօրքերի շարքին, որ կարծես ուզում

էր այրել բոլորին իւր արծուի հայեացքով: Իսկ եթէ թշնամին մօտ էր մեր կողքին՝ այն ժամանակ մեր քաջասիրտ զօրապետը միայն մի հրաման գիտէր. «Հետևեցէք ինձ, քաջեր» — այս էր նրա ամբողջ գիտութիւնը, և մենք այն աւելի լաւ գիտէինք, քան մեր աւագերէցը Մովսիսական պատուիրանները: Նրա ձին միշտ սլանում էր արծուի նման թշնամիների հանդէպ... Նա մեզ լաւ էր հասկանում և թանգ գնահատում մեր արիւնը, որ սուրբ էր նրա համար, իսկ մենք աստուածացնում էինք նրան և նա միշտ պարծենում էր նրանով...

Մտրիօ Լակովիչը մի փոքր շունչ առաւ և շարունակեց պատմութիւնը. որդին պատկառանքով լսում էր հօրը:

— Եւ այդպէս, Տանօ... մեր առաջ փրուած էր անսահման, անապատ դաշտը... Հեռւում երևում էին մաշարների շարժուող զնդերը... լսում էր թմբուկի ձայնը, սայլերի ճռճոցը, ձիաների տրոփիւնը և ձիաւորների աղմուկը... աչքերդ բաց՝ տեսնում ես, ինչպէս չարագործները պատրաստուում են ներկել մեր մայր երկիրը նրա հարազատ զաւակների արիւնով... նրանք երգւում են իրենց նախորդների՝ Հոնների անարժան գործերով, երգւում են, որ կ'օջնչացնեն

բոլոր սերբերին... անէծք, անվայել հայհոյանքներ, սպառնալիքներ խառնուում էին այդ բոլորի հետ... թշուառականներ... Նրանք չէին էլ երևակայում, թէ ինչպիսի դիմադրութեան կհանդիպին, թէ ինչպիսի վրէժկալ պահուած սերբերի սրտերում... Նրանք մոռացել էին, որ մենք վեհ, հերոսական մի ցեղի զաւակներ ենք, որ մենք ընդունակ ենք քաջաբար և անվեհերութեամբ պաշտպանելու մեր հայրենի օջախը, և երբ իրանք մի ժամանակ ապահով էին տաճիկների կողմից՝ այդ էլ միմիայն մեր սերբերիս շնորհովն էր, որոնք իրանց արիւնով ներկել էին այդ երկրի ամեն մի քայլափոխը...

— Քաջեր, հետևեցէք ինձ, — որոտաց մեր գլխին քաջարի զօրապետի զօրեղ, հնչիւն ձայնը: Վ

Ուռուս, յառաջ... կրկնեցին հազարաւոր ձայներ: Հուսարները փախչում են, աւար են թողնում պայուսակները, թնդանօթները նրանց, որոնք մի ժամանակ զրանց համար խլեցին Տաճկաց ճիրաններից Բանատեայի հողը... Սպաները ճիգ են թափում կարգը վերականգնել խառնուած շարքերում... բայց ի զուր են նրանց բոլոր ջանքերը... նրանք անիծում և հայհոյում են իրանց թիկնապահ-

ներին... «Հոնքերի զաւակներ, գոռում էին նրանք, միթէ թոյլ էք տալիս, որ մի չնչին բռուն սերբերը խորտակեն ձեր անընկճելի ոյժը... թո՛ղ տեղի չտալ նա՝ ում երակնե-րում հոսում է մաջարի արիւնը. կռուեցէք քաջաբար:

— Սյդպէս էին գոռում սպաները սար-սափելի յուսահատութեան մէջ, բայց նրանց ձայները կորչում էին ընդհանուր աղմուկի մէջ, և տեղի տալով մահուան երկիւղի առաջ՝ նրանք դողում էին ու փախչում իրանց զինուորների հետ մեր վրէժխնդիր սրերի երեսից... Նրանց բոլոր աւագակալին արարքների վրէժխնդրութեան և հատուցման ժամը հասել էր: Մենք յաղթանակում ենք. այլ ևս ո՛չ ոք չի յանդգնի սպանել մեր կանանց և անմեղ երեխաներին, կրակ տալ մեր գիւղերը: Ստոր մաջարները փախչում են, առանց լեռ նայելու, վայր են ձգում հրացանները, թրերը, վերարկուները, իսկ մի քանիսը մինչև իսկ կօշիկները, միայն թէ թեթև լինին փախչելու համար: Նրանք պատրաստ են մինչև անգամ մերկանալ, որովհետև սաստիկ սիրում էին իրանց կեանքը և ցանկանում էին ապրել երևի նրա համար, որ ապագայումն էլ շարունակեն իրանց զազրելի

ու գարշելի գործերը... բայց շատ նեղ է նրանց փրկութեան ճանապարհը. վարձկան զօրք չէր նրանց հալածողը, խայտաբէտ ժապաւէններով զարդարուած աղնուորդիներ ու խաղալիկներ չէին դրանք... Նրանց հալածում էին զօրեղ, համարձակ, եռանդուն մարդիկ, նրանց հալածում էր գիւղացին, մայրենի երկրի զաւակը, հալածում էր ժողովուրդը, որին գոռոզ ու խելակորոյս մաջարները ամենավերջին անասունից էլ ցած էին դասում... Նրանց հալածում էր ճնշուած, կեղեքուած սլաւոնացու, սերբի վրէժը... Եւ ամեն տեղ նոյն անխնայ մահն էր սպասում... Արևը կամաց մայր էր մտնում կապոյտ ծովի ետևը, բայց նրա ոսկեգոյն ճառագայթները չունէին իրանց մշտական կարմրութիւնը... Ծուխն ու փոշին այնպէս էին խափանել նրանց փայլը, որ կարծես ամպերի և խաւարի միջից թափանցելիս լինին... իրանց մութ-դեղին գոյնով նրանք նմանում էին դագաղում պառկած մեռեալի դէմքի, որը երեւում է ծխուող խունկի խիտ քուլաների միջից... օդի մէջ ամեն ինչ խաղաղ էր, չկար թեթև գեփիւռ անգամ, որ ցրուէր ծուխն ու փոշին, իսկ ծծումբի ու վառօդի հոտը համարեա խեղդում էր մեզ... Կռիւր վերջացաւ...

ինչպէս որ առանց զօրապետի հրամանները մենք հալածում էինք թշնամուն՝ այնպէս էլ առանց նորան մենք կրկին տեղերս կանգնեցինք... Բայց կռուից յետոյ մենք բոլորովին այլ տեսք ունէինք— սե, յոգնած դէմքեր... Ո՛չ մէկը մեզանից ո՛չ մի ձայն չէր հանում, կարծես բոլորս էլ համրացել էինք, միայն զօրապետի երևալովը բոլորի դէմքերն էլ վայրկենաբար լուսավառուեցին, աչքերը փայլեցին. որոտընդոտ «ուռան» ու «կեցցէն» հնչեց հազարաւոր բերաններից և տարածուեց դիակներով ու վիրաւորներով ծածկուած լայնածաւալ դաշտի վրայ... Մեր պաշտելի զօրապետի դէմքն էլ սովորականից աւելի տխուր ու գունատ էր, բայց աչքերից կրակ էր թափում... Երևում էր, որ նա գոհ է մեզանից... Ահա նայում է մեր վրայ, և լայն ճակատը փայլում բերկրութեամբ, իսկ դէմքի վրայ է դալիս մի մեղմ ժպիտ...

— Բարեկամներս... ընկերներս... դիմում է նա մեզ, և նրա ուժգին ձայնը արձագանդ տալիս հեռուում:— Ես չունիմ խօսքերի այնպիսի պաշար, որ կարողանամ արտայայտել այն բոլոր փառքը և գովասանքը, որին դուք այսօր այդպէս փառաւոր կերպով արժանացաք... Դուք իսկական քաջ սերբեր էք...

դուք կտրիճներ էք... Հէնց առաջին կուռւմ դուք ցոյց տուիք մեր պապերի, մեր արիւնով դնուած իրաւունքների խախտողներին, որ ազնիւ մարդուն անկարելի է ստրուկ դարձնել... Դուք ծնուած էք ազատ լինելու համար... և դուք ձեռք կբերէք այդ ցանկալի ազատութիւնը... Կեցցէ ազատութիւն»... Անվերջ «ուռուաները» խախտեցին զիշերային լըռութիւնը... Այդ առաջին կռիւն էր, ծանօ: Այդտեղ առաջին անգամ տեսայ՝ ինչպէս են ընկնում մարդիկ, ինչպէս են նրանք հայրենիքի ազատութեան համար յարձակոււմ իրար վրայ քաղցած վագրերի պէս, սպանելով միմեանց անհոգի դահիճների նման... Կռուից յետոյ է միայն մարդ տեսնում իւր սոսկալի գործերը... Տխրութեամբ նայում է նա այն դաշտին, որ լցուած է դիակներով և վիրաւորներով... Եւ այդ վայրկեանին նա համոզոււմ է, որ քիչ է դեռ՝ համեմատել իրան կատարի գազանի հետ: Եւ նա պարծանքով կարող է բացազանչել. «Օ՛, ի՛նչ են ինձ մօտ վագրերը, չախալները, գայլերն ու միւս վայրենի գազանները. ես մարդս ամենակատարեալ, ամենադաժան գազանն եմ»...

Այս ճակատից յետոյ կռիւները յաջորդում էին միմեանց, կուռւմ էինք շարունակ մա-

ջարների, մեր ժողովրդի երգուեալ թշնամի-  
ների հետ... Այդ ժամանակ մեր աւագները  
և առաջնորդները աւստրիական և մաջա-  
րական կառավարութիւններից, ինչպէս ողոր-  
մութիւն՝ խնդրում էին գոհացում մեր արիւ-  
նով գնուած օրինական իրաւունքներին. —  
նրանք խնդրում էին, որ մենք ինքներս ու-  
նենայինք մեր դատաստանը, որ դատաւիճիւր  
յանցաւորի առաջ նրա մայրենի լեզուով կար-  
դացուէր, որ մեր հարկերի արիւնոտ տետ-  
րակներում սերբերէն տառերով գրուէր, թէ  
սրբան և երբ ենք հարկ վճարել մեր ծանր  
աշխատանքներից աւստրիացիներին և մա-  
ջարներին:—Մենք խնդրում էինք տալ մեզ  
սերբ զօրապետ, որ սերբերէն համարէր Սեր-  
բիայի ընկած զաւակների թիւը աւստրօ-մա-  
ջարական տիրապետութեան ժամանակ, խըն-  
դրում էինք ճիշդ կերպով սերբերէն նշանա-  
կել անսխալ այն հաստափոր գրքի մէջ, թէ  
քանի գիւղեր, աւաններ և տներ են մեզա-  
նից բոցերի ճարակ դարձել... Եւ այդ վերջին  
պահանջը պէտք է պայծառացնէր մաջար-  
ների ու գերմանացիների տիրապետութեան  
փառքը սերբ ժողովրդի վրայ...

Մենք նման էինք այն կոյր մուրացկա-  
նին, որ փայտը ձեռքին և պատուուած տոպ-

րակը ուսին՝ գալիս է մի յայտնի միլիոնա-  
տիրոջ տուն... ձոխ հազնուած ծառաները  
սկսում են ծաղրել անբախտ ծերուկին. նրան  
ընդունում է տանտէրը, բայց սա նոյնպէս  
սկսում է նրան ծաղրելով զուարճանալ.

— Ի՞նչ ես ուզում դու, ծերուկ, հար-  
ցնում է նա. եթէ ոսկի ես ուզում, ինչի՞ք է  
պէտք, քանի որ դու չես տեսնում նրան»:

— Ինձ ոսկի պէտք չէ, ասում է ծերու-  
կը. տոպրակիս կարը քանդուել է, և ես ոչ ոք  
չունիմ, որ կարէ... Լսել եմ որ դու աղջիկ  
ունիս, ուստի և եկել եմ խնդրելու նրան, որ  
կարկատէ իմ տոպրակս...

Այն ժամանակ կատաղած հարուստը ձեռ-  
քի մի շարժումով ցոյց է տալիս թշուառ ծե-  
րուկի գլուխը, և անխիղճ ծառաները ջարդ ու  
փշուր են անում նրա գանգը:

— Արդ աւանդութիւնը ասիւ թէ ինչ է  
պատմում, որդեակս:— Մաջարների ձեռքում  
կային զէնքեր ու թնդանօթներ. իսկ մեզ  
մօտ— ոչինչ. մենք ունէինք միայն ուժեղ ձեռ-  
քեր և մի սիրտ, որ սկսում է բաբախել ա-  
րագ՝ ազատութիւնը մտքերս ընկնելիս: Նը-  
րանց գանձարանները լի էին արքայական տու-  
կատներով, որով զբաւում էին օտար երկրա-  
ցի քաղցած եկուորներին. իսկ մեզ, որ ամ-

բողջ դարեր սեփական արիւնով պաշտպանել էինք թշնամիներից թագաւորական հողը՝ մեզ սպանում էին զանազան զաղտնի և յայտնի միջոցներով:

Մարկոն փոքր ինչ շունչ առաւ և առանց շտապելու սկսեց պատմել ամենատխուր փաստերից մէկը, որ տեղի էր ունեցել 1848 թ. ազատամբռութեան ժամանակ:

Բազմաթիւ հերոսական յաղթութիւններից լեառոյ—այսպէս սկսեց ծերունին—մենք անցանք Թէյզալի միւս ափը... այն ժամանակ ես առաջին անգամը տեսայ մեր լայնածաւալ Բաջկան... Սիրտս սկսեց ուրախ-ուրախ բաբախել կրծքումս այդ հողը տեսնելիս... նա էլ հօ սերբիական է... նա էլ ուռզուած է և ուռզուած է մեր սերբերիս արիւնով, այնտեղ էլ լուում է մեր դահիճ մաջարների առաջացրած լացն ու կոծը... ինչ հրաշալի երկիր է այդ Բաջկան... հարթ, ընդարձակ, անհուն տարածութիւն... ամենաբարեբեր երկիրն է ամբողջ Աւստրիայում...

—Սիրտդ այրում է կսկծից, երբ յիշում ես, որ այդ հրաշալի, հարուստ երկիրը ոտնակոխ են անում ողորմելի մաջարները, որոնք այդ ժամանակ արդէն զրան էլ հարստահարել էին... Եւ մենք տնցնում էինք

գիւղերի միջով, կամ աւելի ճիշտն ասած՝ ոչ թէ գիւղերի, այլ նրանց մոխիր դարձած աւերակների... Շուրջդ— ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած, բայց հրդեհների դեռ ծխուող խարոյկները վկայում են, որ այստեղ դեռ փոքր ինչ առաջ մարդիկ են ապրել...

—Գնում ես օրինակ այնպիսի մի տեղով, որ ամենայն հաւանականութեամբ փողոց պէտք է եղած լինի, բայց շնի հաջոց անգամ չէ լուում... ուր էլ նայես՝ բոլորը աւերակներ են: Ահա և բուսած եղինջների մէջ ընկած է մի դանդ... մի խօսքով աւերման մի սոսկալի պատկեր...

Երեկոյեան դէմ մենք հասանք Փէյուվարաց... Այնտեղ նոյնպէս նկատուած էին մաջար հրոսակների պարզ հետքերը... ինչեր չէին պատմում անխօս, հրդեհուած տները, Աստուծոյ աւերուած տաճարները և տեղ-տեղ փոշու մէջ ընկած գանգերը, որոնց լուացել էր անձրևը և քամին չորացրել... բայց մենք պէտք է այստեղ զիշերէինք... Այդպէս հրամայեց Բան Ելաչիչ, որ այն ժամանակ ամբողջ հարաւային երկրների, ի թիւս սրոց և մերի կառավարիչն էր...

—Մեր գումարտակը պէտք է զիտեր թշնամիներին և պահարկները զօրքերի խա-

ղաղութիւնը... Մեզանից ամեն կողմերում նշանակեցին զանազան ուղղութեամբ պահապաններ: Այս կարգադրութեան պատճառը այն էր, որ Սենտօմաշի մօտերքում և կողքին մաշար զօրքեր էին նկատուել... Մեր Բանը գերմանացի եգերներին հաւատ չէր ընծայում, իսկ քաջ գրանիչարներն էլ երկարատեւ, ծանր «մարշերից» ու ընդհարումներից յետոյ հանգստանում էին... Մեզ նա լաւ էր ճանաչում և կարող էր այնպէս վստահանալ մեր վրայ, ինչպէս և իւր:

Եւ ահա, Տանօ, այդ գիշերը ինձ «մեռեալ պահապան» կարգեցին...

Մարիօն հանդիսաւոր կերպով լուեց. բայց յանկարծ նրա ամբողջ դէմքը մեռելի գոյն ստացաւ, իսկ աչքերը սկսեցին ահուգողով նայել, կարծես մի ինչ-որ տեղ մի սարսափելի բան տեսնելիս լինէին: Մի քիչ հանգստանալուց յետոյ նա շարունակեց պատմութիւնը առաջուայ խաղող ձայնով...

— Կէս գիշերից անց էր, բայց մութ չէր... Լուսնի լոյսը պարզ թափանցում էր ամպերի բարակ շերտերից և լուսաւորում դժբախտ երկիրը, ուր այժմ թագաւորում էր գերեզմանային լուութիւն... Գիշերային թեթեւ քամուց հալածուող չոր տերևների խըշ-

խշոցը միայն խանգարում էր այդ լուութիւնը... Մէկ-մէկ այդ խշխշոցը ամպերի որոտմունքի նման սթափեցնում էր ինձ մտախոհութիւնից, որին անձնատուր էի եղել մենակութիւնից... Յառում ես հայեացքդ հեռուն և դիտում ուշադրութեամբ շրջապատդ... Թուում է թէ մէկը գալիս է... ականջ ես դնում— ոչ ոք չկայ, չորս կողմը մեռելային լուութիւն. գիշեր է... ուշադրութեամբ լաւ դիտում ես հրացանդ, բայց շատ կամաց ու զգոյշ, որովհետեւ «մեռած պահապանը» մեռելի պէս լուռ պէտք է լինի... հանդարտ անց ու դարձ ես անում այս ու այն կողմ, ակամայ գրկելով հրացանդ, որ ամենալաւ ընկերն է այդպիսի տեղերում... Բայց ահա, ականջիս դիպաւ մի ինչ-որ խշխշոց... նայեցի շուրջս. ո՛չ ոք չկայ— այնտեղ իմ առաջ, հինգ-վեց քայլ հեռու տարածութեան վրայ ես նկատեցի ցախի մի խուրձ, որ ինձ կասկածաւոր էր երևում... Ես մօտ գնացի, շուռ ու մուռ տուեցի նրան մի երկու անգամ սուինովս— տակը ոչինչ չկար... ուզում էի հեռանալ, բայց յանկարծ ոտքս դէմ ընկաւ մի ինչ-որ առարկայի... սարսուռ անցաւ մարմնովս, ինձ այնպէս թուաց, թէ մէկը ուժգին հռայ տուեց ոտքս... Չնայելով որ ես բնա-

ւորութեամբ վախկոտ չեմ, բայց այդպիսի տեղում, սիրելի ծանօ, ամենաքաջ մարդու սիրտն էլ սկսում է արագ բաբախել... Այն, ինչին ոտքս դէմ ընկաւ՝ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ խիտ թելաւոր խոտերով ծածկուած հողի մի կոյտ, որի ցանցից հագիւ կարողացայ ազատուել... Հանգստանալով՝ ես ուշադրութեամբ տնտղեցի այդ տեղը և նկատեցի, որ մի թարմ գերեզման է, սակայն առանց խաչի... «Այս ցուրտ ու խոնաւ գերեզմանում, մտածեցի ես, գուցէ հանգչում է մի որևէ մարդու աճիւն, որևէ մէկի գնդակահար կուրծքը... Ես շարունակեցի դիտել շուրջը... գերեզմանից ո՛չ հեռու գտայ մի կտոր կտաւ, մի քիչ էլ հեռու արծաթէ մանր կոճակներով զարդարուած բաճկոնակի մի կտոր, որ Բաջկայում հաւասարապէս հագնում են թէ սերբերը, թէ մաջարները... Ես վեր բարձրացրի կտաւը և համոզուեցի, որ դա տղամարդու շապկի թեւ էր... Ամեն բանից երեւում էր, որ նրան հագնողը մաջար չէր, որովհետև նա սերբիական կտաւից էր և այն էլ նախշկար: Ո՞վ գիտէ ո՞ւմ ծերուկ մայրը կամ քօյրն է գործել ու կարել այն... և ո՞վ է նրան հագել... Բայց հագնողը անշուշտ ախկոտ մարդ չէ եղել— թեև վրայ նկատ

ւում էին լերդացած արեան հետքեր... Դրա թափողին երևի էժան չէր նստել այդ բաւականութիւնը... երևի նրանք կռուել էին, այլապէս ո՞ր տեղից կարող էր լինել այդ պատուած թեւը և բաճկոնի կտորը... Նա, ով որ հանգչում է այս գերեզմանում՝ քաջաբար կռուել է մինչև վերջին րոպէն... Բայց ո՞վ է այնքան գթասիրտ գտնուել, որ թաղել է նրան... մէթէ թշնամիները... մաջարները... բայց մաջարը այդպիսի մեծահոգութիւն չունի, նա մեծահոգի է միայն այն ժամանակ՝ երբ ինքն է կարօտում ուրիշի գթութեան:— Այս տխուր մտքերից ինձ սթափեցրեց թեթեւ քամու սօսափիւնը, որ մեզմփչում էր ընդարձակ դաշտի անսահման հարթութեան վրայ... Գիշերային գեղեցկուհին, լուսինը տխուր նայում էր երկնային բարձրութիւնից Բաջկայի ամայացած դաշտի վրայ... Ա՛հ, եթէ նա կարողանար պատմել, թէ ի՞նչ բաների հանդիսատես է եղել կէս-գիշերային լուսութեան մէջ... Նրա պատմածներից աշխարհը կխաւարէր... Յանկարծ ականջիս դիպաւ կարծես քայլերի ձայներ... ինձնից երկու սաժէն տարածութեան վրայ կանգնած էր մի կանացի տեսիլ... Նրա մարմինը ծածկում էր երկայն սպիտակ շապիկը, որի մեծ-

մեծ ծալքերը մինչև գետին էին հասնում... Գիշերային քամին մեղմ շարժում էր նրա հրաշալի մետաքսանման գանգուրները, որոնք թափուած էին մարմարիոն ճակատի և լիք ուսերի վրայ... Այնպէս էր թւում, թէ միմիայն քամուց շարժուող մազերն էին վկայում, որ կեանք կայ այդ գեղեցիկ մարմնի մէջ, որովհետև կինը աւելի արձանի էր նմանում քան կենդանի մարդու... Նրա լայն բացուած աչքերը նայում էին ինձ վայրենի հայեացքով և այնպէս էին վառուում, որ հէնց հիմալ էլ, երբ լիշում եմ այդ ցնորուած հայեացքը՝ մազերս ցից-ցից են կանգնում գլխիս վրայ...

Սառը քրտինքը պատեց ճակատս... Ես ամբողջովին դողում էի... Յանկանում էի հարցնել, թէ ո՞վ է նա, ինչ է փնտռում գիշերուայ այդ տարածամ պահուն... բայց խօսքերը չէին դուրս գալիս բերնիցս. շնչառութիւնս սղմուում էր, իսկ կուրծքս ճնշուում մի ինչոր անտանելի ծանրութիւնից... Սիրտըս այնպէս ուժգին էր բաբախում, որ կարծես ցանկանում էր դուրս թռչել:

Ես կամեցայ մօտենալ նորան և սուփնս կրծքին ուղղելով պահանջել, որ նա խօսի, բայց չկարողացայ շարժուել տեղիցս...

Ես կանգնած էի կախարդուածի նման և նայում էի նորան, իսկ երևակայութեանս մէջ մի վայրկեանում յարութիւն էին առել այն բոլոր առակները և առասպելները, որ երբ և իցէ լսած էի... Գուցէ դա լեռնային հուրի էր կամ կախարդ... յաւերժահարս... Ես նայում էի նորան աչքերս վրան յառած, նա էլ նոյնպէս նայում էր ինձ... Մի քանի անգամ կամեցայ հայեացքս դարձնել այդ տեսիլից, բայց դա իմ ուժից վեր էր, և թէկուզ այդ ժամանակ տասն շվաբացի գեներալներ էլ ինձ հրամայէին «նայիր դէպի աջ» կամ դէպի ձախ»՝ ես դարձեալ բոլորովին անկարող կլինէի այդ անելու: Ես կանգնած էի արձանի պէս... Լուսինը իւր չքնաղ լուսով պայծառ լուսաւորում էր նրա ամբողջ մարմինը, կարծես զիտմամբ նա կամենում էր աւելի պարզ երևան հանել այդ հրաշալի գեղեցկութիւնը, որը մինչև այժմս էլ չէ անցել մտքիցս... Օ՛, որքան գեղեցիկ էր նա...

Յանկարծ նա խոր հառաչանք արձակեց, բարձրացրեց ձեռքերը և ապա կրկին անգոր կերպով ցած իջեցրեց իւր գեղեցիկ մարմնի վրայ... Փառք Աստուծոյ... նա ուրուական չէ, տեսիլ չէ, նա կենդանի արարած է... մարդը ամենից շատ իւր սեփական երևա-

կայութեան արտադրութիւնից է վախենում քան իրականութիւնից... այդպէս էլ ես...

— Այդ ժամանակ նա շարժուեց դէպի ինձ: Ես բարձրացրի հրացանս, բայց իսկոյն էլի ցած թողեցի. «մեռեալ պահապանը» միմիայն այն դէպքումն է արձակում հրացանը՝ երբ թշնամիները մեծ բազմութեամբ են յարձակում վրան... դէմ առ դէմ եղած ժամանակ դաշոյնը պէտք է գործ տեսնէ... բայց թնչ կարող էի անել ես նորան... պարզ էր, որ նա թշնամի չէր...

— Ես շարունակում էի դիտել նրան... նա կանգնած էր ինձնից ընդամենը երկու-երեք քայլ հեռու... ուզում էի հարցնել ո՞վ է նա, թնչ է կամենում. բայց երբ աւելի նայեցի ուշադրութեամբ դէմքին՝ ինձ այնպէս թուաց, թէ նա քնած է, կամ լուսնոտ: Նրա դէմքը մեռելի գոյն ունէր մեղրամոմից շինածի պէս... վրայից մի տեսակ գերեզմանային սառնութիւն էր փչում... միայն նրա հրաշալի սև աչքերն էին կեանքով լի... Բայց ահա նա շարժուեց... երկար մագերի խիտ-խիտ ծալքերը ծածկեցին նրա ամբողջ մարմինը... արցունքները գլորւում էին գունատ դէմքի վրայով: «Կենդանի է, կենդանի» ուրախացած մտածում էի ես, ինքս էլ չիմա-

նալով, թէ ինչի համար էի ուրախանում. բայց այդ չքնաղ արարածը զարթեցնում էր իմ մէջ կարեկցութեան զգացմունք, որովհետև ամեն բան նրա մէջ վկայում էր, որ նա շատ դժբախտ է... Օ՛, խեղճ արարած... նա դողում էր ինչպէս ծառի տերևը փոթորկի ժամին, և երբ աչքերը բարձրացրեց երկինք՝ նոր միայն ես նկատեցի նրանց հրաշալի արտայայտութիւնը... մի ինչ-որ ցաւ սկսեց ճնշել սիրտս, և մի այնպիսի տխրութիւն եկաւ վրաս, որ ո՛չ մինչև այդ ժամանակն էր եկել, ո՛չ էլ այդ դէպքից յետոյ... Օ՛, ես կեանքումս երբէք չեմ մոռանալու այն չքնաղ աչքերի տանջուած, վշտալից արտայայտութիւնը...

— Նա երկար նայում էր ինձ...

«Ի՞նչ քո տեղը չէ», ասաց նա մաքուր ձայնով, որ զանգակի նման հնչելով տարածուեց գիշերային լուսութեան մէջ, և սպա կամաց աւելացրեց.

— Հեռացիր... միթէ չես տեսնում, որ գերեզմանի վրայ ես կանգնած... դա իմ ամուսնուս դամբանն է...

— Հեռացիր, միթէ եղած հողը բաւական չէ նորան, որ դու էլ քո ծուռ կրունկներովդ կոխոտում ես նրան... Եւ տեսնելով, որ ես

չեմ շարժուամ տեղիցս, այլ կանգնած եմ շարունակ նոյն դրուժեան մէջ՝ նա կատաղաբար փայլատակեց աչքերը և խեղճուած, սարսափով, վշտով ու վրէժխնդրութեամբ լին ձայնով աւելացրեց — «անիծուած լինիս դու»... Նա սպառնալով արտասանեց այս խօսքերը և նրանք ցցուեցին ուղիղ իմ սրտիս մէջ... Եթէ մի ուրիշ անձ արտասանած լինէր այս բառերը և մի այլ տեղ՝ նրանք այնպէս չէին խոցի ինձ, ինչպէս այժմ... Բայց այդ բառերը նա ասաց այնպէս սարսափելի կերպով, որ ես խայթուածի պէս մի քանի քայլ յետ թռայ տեղիցս, իսկ նա նոյն վայրկեանին մի լուսահատ ճիչ արձակեց և հասակովը մէկ փուռեց գերեզմանի վրայ. . . . .

Ուշքս հաւաքելով ես մօտեցայ, որ բարձրացնեմ թշուառ արարածին... բռնեցի նրա ձեռքից — անշարժ էր... ես բարձրացրի նրան, բռնելով յետ ընկած գլխից, և ինչ սարսափ... նրա շապիկը ամբողջովին թրջուած էր արիւնով, որը հոսում էր կրծքի ահագին վերքից: Հէնց նոյն տեղը, նրա մօտ, ուղիղ գերեզմանի վրայ ընկած էր արիւնաթաթախ դաշույնը... Այդ զժբախտ արարածը վերջ էր տուել իւր կեանքին:

Հէնց որ սկսուեց լուսածագը, ես հեռուում նկատեցի թիակը ուսին մի մարդ, երկար թիկնոցով, մեծ մորթէ գլխարկը գլխին, որը արագ քայլերով մօտենում էր չարաբաստիկ գերեզմանին: Ամեն բանից երևում էր, որ դա սերբ էր, շրջակայքի գիւղացիներից... Ինձ մօտենալով՝ նա կանգ առաւ... Տեսայ, ինչպէս նա նկատելով մեռած կնոջը՝ դողաց բոլոր մարմնով, դէմքը փոխուեց և նա դառնութեամբ արտասանեց երկու խօսք. «Ես ախար գիտէի որ...»:

Յետոյ նա դարձաւ ինձ, վերցրեց գըլխարկը, ողջուեց և հանդարտ ասաց — «Բարի աջողում, եղբայր... Ինչ պէտք է անել... այդպէս է պատերազմը... միայն Աստուած ինքը գիտէ, թէ ո՞րտեղ կարող ես տեսնուել ընկերներիդ ու բարեկամներիդ հետ... Ահա, եղբայր, այդ գերեզմանի վրայինը աղջիկս է, իսկ նա, որ գերեզմանի մէջ է, դագաղում՝ իմ ապագայ փեսան... Հէնց երէկ պէտք է նրանք պսակուէին, բայց մաջար զօրքերն եկան, թունաւորեցին մեր բոլոր ուրախութիւնը, սպանեցին փեսացուիս...»

Ծերուկը դառնութեամբ ժպտաց և ապա տւելացրեց կարծես ինքն իրան. «Ես գիտէի, որ այստեղ էլ գտնելու եմ նրան... Նա էլ

տեղ չունէր գնալու... այդպէս է պատերազմը... դեռ երէկ իմ ընկեր Մարկօն որդու համար գերեզման էր փորում, իսկ այսօր էս պէտք է փորեմ աղջկաս համար...

Ծերունին ուսից վեր դրեց թիակը և սկսել էր արդէն փորել գերեզմանը՝ երբ հնչեց թմբկահարութեան ձայնը, որ հրակիրում էր բոլոր պահապաններին...

— Մնաս բարև, ծերո՛ւկ, ... ասացի ես, — ես պէտք է գնամ...

— Գնաս բարև, որդեակս, պատասխանեց ծերունին, մինչև անգամ չնայելով ինձ և աւելացրեց մեղմ տխրազին ձայնով.

— Ես գիտէի, որ այստեղ եմ գտնելու իմ գաւակիս...

Այս իմ առաջին «մեռեալ պահապանութիւնս» էր, Տանօ:

Դ.

Լակօվիչներն ընտանիքը ճաշում էր... ճաշի վրայ խոր լուութիւն էր տիրում... Մարայի ծերացած աչքերը նկատեցին, որ հայրն էլ, որդին էլ պատրաստուում էին մի ինչ-որ լուրջ բանի, բայց նա մի առ ժամանակ չէր համարձակում իւր հարցուփորձերով անհանգրտացնել նրանց: Երբ որ նա բերեց հնդուհաւը՝ Մարկօ ամին ասաց նորան.

Մարա՛, դու այդ հնդուհաւը մի լաւ փաթաթիր այն մեծ նախշկար անձեռոցի մէջ, որը դու նուիրել էիր ինձ փեսացու եղած ժամանակս. այնուհետև մի լաւ գաթա թրխիր, և եթէ Տանօի վերարկուի վրայ որ և է պատուուած տեղ կգտնես՝ իսկոյն կարկատիր, իմ բարի Մարա՛... Տանօն այս երեկոյ ուղեւորուելու է դէպի հեռաւոր ճանապարհ...

Խեղճ Մարայի աչքերը ջրակալեցին. բայց նա ոչ մի խօսք չհանեց բերնից, միայն շուռ եկաւ վառարանի կողմը, սրբեց արտասուքները լայն գոգնոցի ծայրով, խոր անքաշեց և գնաց կատարելու ամուսնու պատուէրները...

Ծեր Լակօվիչը կարեկցութեամբ լի նայում էր նրա ետեւից... յետոյ դարձաւ Տանօին և անսովոր քաղցրութեամբ ասաց նորան.

— Պատերազմը սարսափելի բան է. Տանօ, բայց դու հօ ինքդ ես ցանկանում գնալ և...

— Ցանկանում եմ, ընդհատեց նրան Տանօն, այո՛, ցանկանում եմ գնալ... Այսօր մենք ենք պարտական օգնելու մեր հերցեգօվինցի և բոսնիացի եղբայրներին, իսկ վաղը նրանք կօգնեն մեզ... Հայրիկ, կամ պիտի թօթափենք մեր շղթաները, կամ մեռնենք... հինգ տարի է արդէն, որ մենք հայրենիք չունինք... Հինգ տարի է, որ մենք

ամեն օր շարունակ կուռում ենք հայրենիքի ազատութեան համար և պէտք է որ վերջապէս ստանանք այդ ցանկալի ազատութիւնը... Զուր չէ, որ մենք այսքան արիւն ենք թափել... Մենք հօ քնած չէինք, այլ կուռում էինք նրա համար և այն էլ քնչպէս: Չկայ աշխարհումս մի ազգ, որը այնքան կուռած լինէր և որը այնքան քիչ ընկճուած լինէր հոգևով, ինչպէս մեր սերբիական ժողովուրդը... Այ Գաբրիէլի որդի Մաքսիմը... նա ամեն օր կարդում է մեզ համար լրագիրներ, գրքեր, և դրանք բոլորը մի բան են միայն ասում — որ մարդս և ազգերը ծնուած են ազատութեան համար, որ նրանք պէտք է ունենան իրանց կառավարութիւնը, իրանց տէրութիւնը և թագաւորը... Միթէ մեզ միայն պէտք է տիրապետեն օտար երկրացի վայրենիներ — տաճիկներն ու մաջարները, որպէս զի կենդանի մաշկեն մեր կաշիները, նըստեցնեն ցցերի վրայ, կրակ տան մեր տները և մորթեն ու անպատուեն մեր բոլորովին անմեղ կանանց ու երեխաներին... Ա՛խ, հայրիկ, եթէ նոյն իսկ իւրաքանչիւր քայլս, կեանքիս ամեն մի վայրկեանը էլ աւելի փորձանքների ենթարկուէին, քան այն, ինչ որ դու կրել ես քո «մեռեալ պահապանութեանդ»

ժամանակ՝ ես դարձեալ կերթայի կամաւորների հետ պատերազմ, այդ երկրորդ Կոստովի զաշար...

— Բայց միթէ դու չես լսել, Տանօ, որ ամբողջ Սրիմից, Բաչկայից ու Բանատայից հաւաքուել են ամենալաւ քաջերը և հայրենասէրները և միայն մեզ են սպասում, որ զիշերը անցնեն Սերբիա, իսկ այնտեղից մնացած կամաւորների հետ Հերցեգովինա... Միթէ դու այդ չես լսել. մեր հոգին անկարող է լուել, երբ մեր եղբայրների արիւնը վրէժ է կանչում... Մենք բոլորս վճուել ենք մեռնել մեր թանկագին հայրենիքի և ազատութեան համար...

— Բայց, հայրիկ, մի խնդիր միայն, կատարիր... ընդհատեց նրան Տանօն. նրա զօրեղ ձայնը դողաց և աչքերում փայլեց մի այնպիսի կրակ, որ ապացոյց էր նրա հաստատուն վճռին... «Ծնւր ինձ քո՝ մաջարներից խլած, չախմախի հրացանդ, որ միշտ հետդ էիր ման ածում... Ահա այս է իմ բոլոր խնդիրս, նուիրիր նրան ինձ... Ես կմաքրեմ այդ զէնքը, և երբ նա կփայլէ՝ այն ժամանակ կայայծառանայ և իմ զէմքը: Քո հրացանդ ժանգոտուել է թշնամու արիւնից, իսկ սերբ ժողովրդի զէմքը մուսյուրուել երկարատե ստրկու-

Թիւնից... Բայց այդ դարաւոր ժանգն էլ մենք կարող ենք սրբել մեր սեփական և մեր թըշնամիներէ արիւնով...

— Ես երբէք չէի բաժանուում այդ հրացանից, սիրելի Տանօ, և նա փալլում էր միշտ ինչպէս հարկն է... Այժմ էլ ուրեմն թո՛ղ տուր մի վերջին անգամ, իմ այդ վաղեմի ընկերիցս բաժանուելուց առաջ, մաքրել նրան, իսկ դու այնուհետև գործածիր յաջողութեամբ և պաշտպանիր եղբայրներիդ... Դեռ մինչև այդ դու գնա գիւղը, եալլի պար եկ, գուարճացիր ջահէլներէ հետ... ո՞վ գիտէ, գուցէ այն կողմերում պարն էլ ուրիշ տեսակ է, դու կկարօտես քո հայրենի կըր պարը... Դնա՛, Տանօ... Միայն նայիր, հա, բերնիցդ յանկարծ բաց չթողնես... գիտես, որ գործը սուրբ գործ է և մեծ գաղտնիք...

Տանօն գնաց, իսկ ծերունի Մարիօն մօտեցաւ վառարանին, մեկնեց ձեռքը դէպի անկիւնը, դուրս բերեց թիկնոցը և նրա միջից զգուշութեամբ հանեց հրացանը — դահէնց այն առարկան էր, որը նախընթաց գիշերը ցած էր բերել վերնայարկից, քիչ երկիւղ չպատճառելով դրացիներին իւր գործողութիւնների խորհրդաւորութեամբ...

Նա վերցրեց քացախի մեծ շիշը, մի քիչ

ածեց նրանից ափսէի մէջ, մէջը կաւիճ մանրեց և հաստ մահուղի կտորը թաթախելով մէջը՝ սկսեց սրբել հրացանը... Այդ բոլորը նա կատարում էր մեծ զգուշութեամբ, որպէս զի պատուհանից մարդ չտեսնէ...

Մէկ-մէկ նա խոր մտածմունքի մէջ էր ընկնում և սկսում էր մեղմ երգել՝ գլխի շարժումով չափ տալով երգին...

Մի վհատիր, դու ժանգոտած իմ հրացան...  
Օտար ձեռքերի չեմ յանձնում ես քեզ...  
Այլ յանձնում եմ քեզ մի քաջ մրցողի, —  
Սիրելի որդուս իբրև մի նուէր:  
Դրանից լաւ նուէր կլինի՞ հարազատ որդուն.

Մի վհատիր, իմ ժանգոտած հրացան...  
Նրա ձեռքերում դու օտար չես լինի.  
Դու կուղեկցես նորան դէպի պատերազմ,  
Դու կպաշտպանես սուրբ ազատութիւնը...  
Նայիր, հաւատով և ճշմարտութեամբ ծառայիր նորան...

Պսակիր յաղթութեամբ քաջի ճակատը  
Եւ վերադարձրու նրան հօր գիրկը...  
Մի վհատիր, դու ժանգոտած իմ հրացան...

Եկեղեցու գիմաց սարքուել էր արդէն ջահէլների կազմուած պարը, բայց ի՛նչ

պար,—նայելուց մարդու քէֆն էր գալիս... Առողջ, գեղեցիկ, աշխոյժ ու թարմ ժողովուրդ... Սիրտդ լցում էր ուրախութեամբ, երբ տեսնում էիր երկու սեռի երիտասարդների այդ ազատ և ուրախ խումբը ազգային հագուստներով, որոնք աւելի ևս թարմութիւն, գեղեցկութիւն ու աշխուժութիւն էին տալիս նրանց:

Օրիորդները հագել են մետաքսէ ու ոսկէ թելերով նաշխած շապիկներ... Նրանք խրմբուել են մի տեղ, ուրախ ուրախ ծիծաղում են, նայում իրար և ջիգրացնում երիտասարդներին, բայց այնպէս էլ հեշտ չէ նրանց ծաղրածութիւններով շփոթեցնել... հապա էլ ինչք ջահէլներ են....

Իսկ երիտասարդները մրցում են իրար հետ, թէ ո՞վ աւելի յաջող ուրախութիւններ կանէ հաւաքուած գեղեցկուհիների առաջ...

Տանօն մօտեցաւ պարին, աչքէ անցրեց բոլորին, բայց չմտաւ պարելու... Ասենք այդ ոչ ոք էլ չնկատեց, բացի միայն Գաբրիէլի որդի Մաքսիմից, որի այգին ու արտը ծերունի Մարկօի տան կողքին էր... Դա մի գեղեցիկ, խորամանկ, խելօք ու համարձակ տղայ էր... Նրա հագուստը կապոյտ, նուրբ մա-

հուզից էր և սաստիկ էլ սազ էր գալիս վրան...

Տանօ, այդ քնչպէս է, որ դու չես պարում, ասաց նա ուրախ ու բարեկամական եղանակով. դէ, լաւ, կարծես հիմա բացի Ստանա Գլեշինից ուրիշ աղջիկ չկայ... կան... նրանից աւելի գեղեցիկները կան... և այդ ասելով նա նայեց շուրջը ու բարձր հոհաց... Ծիծաղում էին և միւսները, մինչև անգամ Տանօն ինքն էլ էր ցանկանում ծիծաղել իւր վրայ, բայց չկարողացաւ: Այս միջոցին պարը մտաւ Ստանան...

Բաւական էր մի հայեացք, որպէս զի երիտասարդ սրտերը հասկանալին իրար...

Տանօն մտաւ պարը, առաւ պարող աղջկերանց մէկի ձեռքը, իսկ Ստանան էլ մտաւ միւս կողմից... դեռ մի պտոյտ էլ չէին տրել՝ երբ Տանօի հետ պարող աղջիկը դուրս եկաւ շրջանից, իսկ նրա տեղը բռնեց Ստանան...

Երիտասարդ զոյգը անձնատուր եղած իրանց զգացմունքներին, չէին իմանում, թէ քնչ էին պարում, կամ քնչ երգում իրանց շուրջը: Երաժշտութիւնը ուրիշ պար էր նուագում, իսկ նրանք ուրիշ պար պարում: Մաքսիմը շարունակ դէտում էր նրանց և չէր կա-

բողանում զսպել իւր շրթունքներին երևցած լպիւրը, արհամարհական ժպիտը... Բայց և այնպէս նա լաւ էր, իսկ մտքովը հետևեալն էր անցնում.

— Ոչինչ... Թող ինչ ուզում են անեն... ես այնու ամենայնիւ համոզուած եմ, որ նա յետ ու առաջ իմն է լինելու...

Եւ այդպէս մտածելով նա բոլորովին հանգստացաւ...

Երիտասարդները շարունակում էին իրանց ուրախութիւնը, թէպէտ և մութը քանի գրնում սաստկանում էր... Նրանք չէին ցրուում, միայն Տանօն և Ստանան դուրս եկան պարից և հեռուում անյայտացան...

Նրանք թէպէտ միասին դուրս եկան, բայց իսկոյն և եթ գնացին հակառակ կողմերով, որպէս զի ոչ ոքի մէջ կասկած չգար թեցնեն և զուր բամբասանքների առիթ չտան, որ լաւ չէր աղլկայ համար... Նրանք յոյս ունէին մի ուրիշ տեղ հանգիպելու...

Գիւղացիները միևնույն ժամանակ և՛ օձի խորամանկութիւն ունին և՛ երեխայական անմեղութիւն. նրանք աշխատում են խաբել ուրիշներին, բայց իսկապէս միայն իրանք իրանց

են խաբում... Սակայն նրանց բացակայութիւնը Մաքսիմը նկատեց և դա նրան առանձնապէս հետաքրքրեց... Սակայն նա հանգստացնում էր իրան հետևեալ մտքերով.

— Ոչինչ, թէպէտ և այժմ նրանք միասին են, բայց վաղ թէ ուշ նա դարձեալ իմն է լինելու...:

Թէ սրտեղից էր այդ բանը նրա գլուխը մտել՝ այդ երևի նա ինքն էլ չէր կարող բացատրել... պարզ էր միայն, որ նա յոյսը դրել էր իւր հարստութեան ու գեղեցկութեան վրայ...:

Ստանան լիրաւի մի հազուագիւտ աղջիկ էր, սևահեր, գեղեցիկ, բարձրահասակ ու վայելչակազմ: նա միշտ բոլորի հետ հաւասարապէս ուրախ և սիրալիր էր վարուում... Չկար գիւղում մի երիտասարդ, որին նա չկարողանար զիւթել իւր գեղեցկութեամբ, բարութեամբ և քաղցրահայեաց դէմքով... բայց նրանցից ոչ մէկը չէր կարող պարծենալ, որ Ստանան տնտարբեր չէ դէպի ինքը... Միմիայն Տանօն էր, որ սկզբում վայելում էր նրա համակրութիւնը: Այնուհետև հետզհետէ նրանց մէջ յառաջ եկաւ սերտ բարեկամութիւն, որը շուտով սիրոյ փոխուեցաւ... Սա նրա հետ էլ արտաքուստ սառը և լուրջ էր

վարուում... Ասե՛նք նրանց այդպիսի յարարե-  
րու թիւնների համար ոչ ոք չէր նախատում,  
որովհետեւ բոլորը գիտէին, որ շատ մանուկ  
հասակից դեռ նրանք միասին էին մեծացել.  
դրա մէջ էլ ո՛չ մի վտտ բան չէին տես-  
նում... Բացի այդ նրանց տներն էլ, արտերն  
էլ կից էին իրար... դէհ, ո՛չ մի բան այնպէս  
չէ նպաստում երիտասարդ սրտերի իրար մօ-  
տենալուն, ինչպէս մօտ ու կից հարեանու-  
թիւնը... Այդ բոլորը մօտեցրեց նրանց մի-  
մեանց և հասարակ, համարեա մանկական ըն-  
կերու թիւնը փոխադրեց իսկական սիրոյ... Նը-  
րանք իրանք էլ անգիտակցաբար և սաստիկ  
սիրեցին միմեանց:

Երբ Ստանան պարից տուն հասաւ՝ Տա-  
նօն բռնեց նրա ձեռքից և կամաց տարաւ  
ջրաղացի մօտ, ոչի ստուերի տակ ո՛չ մի հե-  
տաքրքիր աչք չէր կարող նկատել նրանց...

— Ստանա, սկսեց նա լուրջ, համարեա  
հանդիսաւոր եղանակով. մեր հրաժեշտի ժա-  
մը հասել է... այս երեկոյ ես ուղևորուում  
եմ հեռաւոր ճանապարհ... Մի հարցներ, թէ  
ո՛ւր և ինչի՞ եմ գնում. մի հարցներ, թէ ե՛րբ  
կդառնամ և կվերադառնամ արդեօք. այդ ա-  
մենը Աստուծոյ կամքիցն է կախուած... Բայց  
ես կամենում եմ հրաժեշտ տալ քեզ, գուցէ

և Աստուած այնպէս տնօրինէ, որ էլ չտես-  
նուենք...

— Ի՞նչ գնում ես... դ՞ու... արտասանեց  
Ստանան մի խոր հառաչանք արձակելով, և  
միայն այժմ, ուղիղ հրաժեշտի օրը նա զգաց,  
թէ որքան սաստիկ էր սիրում իւր ընկերոջը...

Տանօն նրան երբէք չէր խաբոււմ, իսկ  
այժմ բացի այդ նրա գէմքը սովորականից  
աւելի գունատ էր և իւր վրայ կրում էր մի  
ինչ-որ հանդիսաւոր վճուի կնիք, ձայնի մէջ  
նկատուում էր մի առանձին անսովոր ոյժ...  
Նրան այնպէս թուաց, թէ Տանօն կարծես  
մեծացել է...

Ստանան տեսաւ, որ Տանօն իրան չէ խա-  
բում, և նրա գեղեցիկ գլուխը հանդարտ թե-  
քուեց ընկերոջ ուժեղ կրծքի վրայ, ձեռքերը  
ակամայ ընկան նրա գլխին և փաթաթուեցին  
Տանօի վզովը... Այդպէս գրկախառնուած նը-  
րանց շրթունքները հանդիպեցին իրար և ա-  
ռահին համբոյրը դրոշմուեց իբրև կենդանի  
առհաւատչեայ այն բոցավառ սիրոյ, որ մին-  
չև այդ րոպէն աննկատելի ծածկոււմ էր  
նրանց սրտերում...

— Ես գնում եմ, կրկնում էր Տանօն մեղմ  
ձայնով... մի հարցներ ո՛ւր... մի հարցներ  
ե՛րբ կվերադառնամ... կվերադառնամ... իմ

անգինս... եթէ միայն կենդանի մնամ... բայց զու... զու, կսպասես ինձ, Ստանա...

— Յաւիտեան, իմ սիրելիս...

Նոյն երեկոյեան Տանօն ուղեորուեց այնտեղ, ուր կանչում էին նրան հարստահարուած եղբայրների պատիւն ու տանջանքները. իսկ Ստանան մնաց մենակ տանը... Իւր Տանօի գնալու ամբողջ առաջին գիշերը նա աչք չխփեց, և երբ միւս առաւօտ վեր կացաւ՝ նրա ուռած ու կարմրած աչքերից, գունատ դէմքից երևում էր, որ նա երկար ու անմխիթար լաց է եղել...

Պառաւ մայրը այդպիսի սաստիկ փոփոխութիւն նկատելով աղըկայ մէջ՝ հոգածութեամբ հարցրեց նրան. Ստանա, ինչ է պատահել քեզ, աղաւնեակս, հիւանդ հօ չես...:

— Ո՛չ, մայրիկ, ոչինչ... միայն գլուխս է քիչ ցաւում... պատասխանեց աղջիկը շուռ գալով և ծածկելով իւր վշտի իսկական պատճառը . . . . .

Ե.

Շատ շարաթներ անցան Տանօի գնալու օրից, բայց ոչ ոք չգիտէր, թէ ո՛ւր է նա

գնացել... Դա բոլորի համար հանելուկ էր... Մարկօ ամին ըստ սովորականին լուռւմ էր... Տնային գործերը կատարում էր նա ինքը պառաւ Մարայի հետ... Սակայն մի-մի անգամ նա խոր անք էր քաշում, թէև դա շատ սակաւ էր պատահում, այն էլ երբ մօտը մարդ չէր լինում... Յաճախ նա լուռւմ էր անհամբերութեամբ աչքերը դէպի հեռուն, բայց ո՛չ մի մխիթարական բան չտեսնելով՝ վշտահար դարձնում էր գլուխը դէպի այգին և հանդարտ աւելացնում.

— Չկայ նա... և ո՛չ մի լուր էլ չկայ ներանից... գոնէ գիտենայի որտեղ է նա գտնւում, ո՛ւմ խմբում... Ա՛յ, լրագրներում բոլորի մասին գրում են, բայց նրա, որդուս մասին ոչ մի խօսք էլ չկայ... կարծես ջուրն ընկած լինի...

Այն ինչ գիւղում զանազան ձայներ էին պտտում Տանօի անյայտանալու մասին: Տղամարդիկ ասում էին. Մարկօ ամին փոքր ինչ վատ բնաւորութեան տէր է, դէհ, զարմանալի էլ չէ, որ Տանօն թողել է նրան և պանդխտութեան գնացել... ան, ինչ վատ մարդ է այդ Մարկօն... Բայց վերջին խօսքերը բոլորն էլ շուռկով էին ասում, այնպէս որ Մարկօի ականջը բոլորովին չէին հար-

նում գրանք: Տերուկից շատ խիստ էին վախենում: Իսկ կանայք բոլորովին ուրիշ տեսակ էին բացատրում.

—Նա սիրահարուած էր այդ Գլիշինի աղջկայ վրայ, նա էլ երևի խաբել է... Տանօն էլ խեղճը խելքը կորցրած սար ու ձոր է ընկել ու թափառում է ամեն տեղ... կարծես մեր գիւղում բացի էդ Գլիշինի ջաղուկից ուրիշ լաւ աղջիկ չկար... Ինչպէս լաւ տղայ էր ինքն էլ... ա՛հ, Աստուած իմ, որքան մարդու մեղքը գալիս է... գուցէ և խեղճը խեղդուել է մի տեղ, վերջ դրել իւր կեանքին... Տեսա՞ք ինչ բերեց այդ ջաղուն խեղճ մարդու գլուխը... և այլն և այլն:

Բայց շուտով գիւղում բոլորովին ուրիշ բան իմացան... Մի անգամ, արդէն 1876 թուականի նոր տարուց յետոյ, գիւղը մի միջին տարիքով աղքատ մարդ էր եկել՝ տեսքով առողջ և ամրակազմ... միայն մի ոտքը փայտից էր... Հագուստը բաւական խայտաբղէտ էր: Առողջ ոտին հագել էր օպանօկ \*), որը Բանատիայում բոլորովին չեն հագնում. գլխին ունէր սև գլխարկ, ծայրը արդէն գոյնը տուած կարմիր մահուդից. վարտիքը զի-

\*) Տեղական կոչիկ:

նուորական էր, և այդ բոլորի վրայ էլ Բանատիայի վերարկու... Երբ նա սրճանոց մտաւ՝ բոլոր գիւղացիք զարմացած նայեցին վրան, բայց ո՛չ ոք չխօսեց... Աղքատը մաքուր սերբերէն լեզուով խնդրեց մի բաժակ օղի. խմեց, փողը հանեց և վճարելով գործակատարին՝ բարձր ձայնով դիմեց ներկայ եղողներին.

—Պարոններ, արդեօք չէ՞ք կարող ասել ինձ, թէ որտեղ է ապրում Մարկօ Լակօվիչը...

Գործակատարը և բոլոր հիւրերը զարմացած նայեցին անծանօթի վրայ, կարծես ցանկանում էին հարցնել նրանից. «Իսկ դու, սիրելի բարեկամ, որտեղից գիտես մեր Մարկօին»...

Աղքատը կրկնեց հարցը...

Այն ժամանակ գործակատարը ցոյց տուեց նրան Մարկօի բնակութեան տեղը և ստանալով ներկայ եղողներից ծախած գինու վճարը՝ դուրս եկաւ նրան ճանապարհ ձգելու... Աղքատը շտապում էր հասնել Լակօվիչի տունը... Մարկօ ամին այդ միջոցին նստած էր սեղանի առաջ և թերթում էր հին, բրբրուած ու իւղոտուած երազահանը... Մարան նստած բամբակ էր մանում...

—Իրտես, Մարա, ինչ կայ, ասաց Մարկօ

ամին, այս գիշեր ես վատ երազ եմ տեսել... կարծես...

—Մարայի աչքերը ջրակալեցին... Խեղճ մայրը գիտէր, թէ ումն էր տեսել երազում Մարկո ամին. մենակ հօ նա չէր. ինքն էլ ամեն գիշեր երազում տեսնում էր նրան, իւր որդուն... Նա փորձեց մխիթարել ամուսնուն:

—Երկւոր, անքուն գիշերներ են, Մարկո... այդ բոլորը քեզ թուում է... Աստուած ողորմած է... վերջը բարի կլինի...

Բայց այդ ժամանակ բակից շան կատաղի հաջոց լսուեց... Մարկո ամին դողաց...

—Մարս... այդ ո՞վ է գալիս մեզ մօտ...

Իուուր բացուեց, և աղքատը մտաւ սենեակ... Նրան տեսնելուն պէս Մարկոի դէմքը վալրկենաբար մեռելի գոյն ստացաւ... Նրան այնպէս թուաց, թէ կենդանույն տեսնում է այն ուրուականին, որ երազում երեւացել էր նորան. նա կարծես տկամայ մօտեցաւ աղքատին...

—Իու Տանօի մօտից ես եկել ինձ մօտ...

—Այո... ես Տանօի մօտից եմ եկել... ահա մի ամիս է արդէն, որ մենք բաժանուեցանք իրարից...

—Կենդանի է արդեօք իմ աղաւենեակս...

Հարցրեց խեղճ Մարան, հեղեղուելով դառն արտասուքների մէջ. նա երկիւղից դողում էր, չլինի թէ յանկարծ սարսափելի պատասխան ստանայ. — Կենդանի է արդեօք իմ սիրելի որդեակս...

Աղքատը կմկմաց, ձեռնափայտը դողդողաց նրա ձեռքում... չգիտէր ինչ պատասխանէ... վերջապէս ոյժը հաւաքելով կամաց արտաստնեց.

—Այո... նա... մեռաւ...

Մայրը ճիչ արձակեց, իսկ Մարկո ամին երկար նայում էր աղքատի երեսին, կարծես ցանկանում էր լիշել նրա դէմքի ամեն մի գիծը...

—Այո... շարունակեց աղքատը տխուր ձայնով, Տանօն ընկաւ... այդ Ծննդեան նաւակատիքին էր... Մեր խումբը կրակ էր տուել մի ինչ-որ տաճկական գիւղ... նրա բնակիչները ցիր ու ցան էին եղել՝ ով ուր կարողացել էր. իսկ մենք ինչ անասուն որ գտանք գիւղում՝ քշեցինք սարը: Երբ գիշերը մօտեցաւ՝ մենք մորթեցինք մեր քշած ոչխարներից մի քանիսին, մի մեծ խարոյկ վառեցինք և խորովեցինք նրանց, որպէս զի ուրախ անցկացնենք ծնունդը... Մեր գլխա-

տորը «մեռեալ պահապան» կարգեց մի ինչ-որ հերցեգովինցու քո ճանօթի հետ...

— «Մեռեալ պահապան»... հանդարտ կըրկնեց Մարկո Լակովիչը կարծես թմրուածեան մէջ:

Կէս գիշերուայ մօտ լսուեցին հրացանաձգութեան ձայներ...

— Եւ այն ժամանակ էլ նա մեռաւ, հարցրեց սթափուելով Մարկո ամին...

— Այո... մեռաւ... պատասխանեց աղքատը, որին Մարկօն կլանում էր աչքերով... Իսկ հետեւեալ պատերազմում վերաւորեցին ոտքս, որը և նովում կտրեցին...

Աղքատը լռեց և հեռացաւ նախ Լակովիչի տնից և ապա գիւղից: Բայց Մարկօ ամուն դեռ էլի այնպէս էր թւում, թէ նա կանգնած է իւր առաջ, ձեռնափայտի վրայ յենուած, և ինքը երկար նայում է նրա քաղցից մաշուած դէմքին, պատառոտած հագուստին և տարօրինակ ու չտեսնուած «օպանօկին»...

— Ընկաւ... արտասանեց նա յուզմունքից խեղդուած ձայնով... ընկաւ մեռեալ պահապանութեան ժամանակ... Այդ դժու էր ինձ ասողը... էլ ինչ ես կանգնել այստեղ, անասուն... հեռացիր... գնա, կորիր... կո-

րիր, անամօթ խաբեբայ... կորիր, անամօթ մուրացկան: Մէկ նայեցէք, ի սէր Աստուծոյ, որքան աներես է այդ մարդը... ստիպուած եմ շների օգնութեամբ դուրս անել նրան իմ սեփական տնից... Եւ Մարկօ ամին լիրաւի շներին զրգուում էր երեւակայական մուրացկանի վրայ... Ծները տեսնելով նրա սարսափելի դէմքը՝ սկսեցին հաշել, իսկ յետոյ երկչոտութեամբ կծկեցին պոչերը և մոմըրուով փախան իրանց բները...

— Իէհ, փառք Աստուծոյ, գնաց... ասաց նա ինքնաբաւական դէմքով... Յետոյ նա առանց գլխարկի դուրս թռաւ փողոց և սկսեց ձայնովը մէկ գոռալ:

— Է՛յ, բարեկամ... է՛յ, եղբայր... մուրացկան... կանգնիր... երևի դու գիտես նրա ընկած տեղը... սպասիր գունէ մի քիչ, ես էլ կգամ քեզ հետ նրան թաղելու...

Մուրացկանը վաղուց արդէն անյայտացել էր, բայց Մարկօ ամին վերադարձաւ տուն, առաւ բահն ու թիակը և գնաց իւր երեւակայութեան ստեղծած մուրացկանի ետեից... Վերջը գիւղացիները պատմում էին, որ տեսել էին նրան այդ առաւօտը բահը ու թիակը ուսին դուրս գալիս Կից, բայց թէ ո՛ր ոչ ոք չգիտէր, և իրան հարցնել էլ չէին հա-

մարձակուել... այդ օրուանից արդէն էլ երբէք չէին տեսել Մարկօին և ոչ էլ մի բան լսել նրա մասին...

Մի քանի ամիս անցած՝ Մաքսիմի հայրը եկաւ Ստանայի մօր մօտ, որ վերջինիս աղջիկը ուզէ իւր որդու համար, բայց Ստանան մերժեց նրան:

Մաքսիմին այդ բանը չվհատեցրեց և նա շարունակում էր մխիթարել իրան.

— Թող, ոչինչ... նա այնուամենայնիւ իմս է լինելու... նա յուսով էր, որ ժամանակը ամեն բանի կյաղթէ...

— Ժամանակը, մտածում էր նա, կստիպէ Ստանային մոռանալ իւր վիշտը...

Բայց նա սխալում էր, սերբիացի աղջիկը ընդունակ չէ մոռանալու իւր վիշտը... Նա յոյս էր զնում իւր գեղեցկութեան վրայ, իւր ոյժի ու հարստութեան վրայ, բայց Ստանան ոչ մէկն էր նկատում, ոչ միւսը և ոչ էլ երրորդը...

Խեղճ պառաւ մայրը կամենում էր համոզել նրան, որ մարդու գնայ, եթէ ոչ Մաքսիմին՝ գոնէ իւր բազմաթիւ փեսացուներէց

մէկին... բայց Ստանան անուսնութեան մասին լսել անգամ չէր ուզում...

— Ներքը ինձ, մայրիկ, բայց աւուսնանալ ես չեմ ցանկանում, չեմ կարող... ասում էր խեղճ աղջիկը իւր վիրաւորուած մօրը:

Սովորաբար այսպիսի խօսակցութիւններից յետոյ երկուսն էլ գրկախառնուած՝ սկսում էին դառն ու անմխիթար կերպով լալ...

Երբեմն պատահում էր, որ մայրը խընդրում էր նրան գնալ պարելու... խեղճ պառաւը յոյս ունէր, որ ընդհանուր ուրախութեան մէջ նա փոքր ինչ կբացուի և վիշտը հետզհետէ կանցնի կմոռացուի. բայց նա դառնապէս սխալում էր. այդպիսի առաջարկութեան Ստանան սովորաբար հետեւեալն էր պատասխանում.

— Բայց իմ ճանօն որ այնտեղ չէ... մայրիկ...

Երբեմն երբ մայրը յանդիմանում էր նրան մի որևէ բանի համար՝ Ստանան լաց լինելով՝ հետեւեալն էր պատասխանում:

— Շուտով դու կափոտաս ինձ, մայրիկ...

Նա սակաւ էր դուրս գալիս տանից... Երբեմն միայն զնում էր հանգուցեալ ճանօն մօր, Մարայի մօտ և այնտեղ երկուսը միա-

սին, սիրալիր գրկախառնուած՝ երկնոր ու  
աղի-աղի լաց էին լինում...

— Սխար ես նորից տեսայ նրան երա-  
զումս... ասում էր երբեմն պառաւը... գլու-  
խը ջախջախուած էր, իսկ սրտից առուի նման  
տաք արիւն էր հոսում...

Խղճուկը կամենում էր էլի խօսել, բայց  
արտասուքները և խոցոտուած սրտից դուրս  
թռած հառաչանքները խլացնում էին նրա  
ձայնը:

— Ես էլ տեսայ նրան երազումս, մայրիկ,  
ասում էր Ստանան, ճիշտ հէնց Գաբրիէլի  
ջրաղացի մօտ. նա գրկեց ինձ և այնպէս  
քնքշութեամբ հարցնում էր.

— Իսկ դու կսպասես ինձ, իմ Ստանաս...

Ես նրան պատասխանեցի.

— Յաւիտեան, իմ Տանօ...





3898

9013

